

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ա Ր Ե Ի Ա Գ Ա Լ

Կը ճեսնես լոյսն ահա՛. բերկրութի՛ւն երկնածիր.
Աւխարհի շունչերուն կը բանաս պատուհանդ.
Սեմիդ մօտ կ'երգէ ծղրիթն անձանձիր
Եւ կը զգաս սարսուլն հողին արգաւանդ:

Գիսես թէ ո՛ր դաւեւն, առսրւան ո՛ր ժամուն;
Արեւոյսը կ'ամբառնայ զերդ աղաղակ մ'անկարծ,
Թեւը անվեհեր, սիրքը սրբովուն
Ա՛յն ամպէն ալ վեր ուր խոհոյ է բառած:

Դուն գիսես թէ այգուն, ջինջ ո՛ր ջրակոյսէն
Կարմալանջը կուգայ ըմպել գաղտագողի,
Եւ զոյգ հաւփալներ, ծառէն ո՛ր ասեն
Կ'երթան վարսակին դէպի դաւեսն յուրքի:

Առաւօ՛տ մեծափառ. ովկիա՛ն գեղեցկութեանց...
Կը հնչեն զըւարթնոց ծնծղայք աւեհաբեր.
Զէ՛ աւխարհն այլ եւս մութ եւ անթափանց.
Լօգիկն Աստուծոյ ծոպերն է պարզեր:

Կը գինովնայ հոգիդ համերգէն հոսանուտ
Որ, անտառին մէջսեղ, խօլանձրեւին ասեն,
Կը կաթէ աստ անդ իր հնչիւնը զուտ,
Կը դադրի, կը ծնի, կը ցրուի վերջէն:

Ո՛հ, արդէն մոռցած եմ մարդը, Զարի՛ իբխան,
Աւխարհը պղծելու իր մոլուցքը դժխեմ.
Եւ գո՛գ լըւացուած ջուրով մկրտութեան՝
Դէպի սուրբ արփին գրլուխս վեր կ'առնեմ:

Ու տարուած յորձանքէ մ'ուրախութեան անհուն,
Զեմ անաստեւ այլ եւս հըրամանին երկնից,
Եւ աստուածութեամբ հոգիս պատարուն՝
Կը մտնեմ դռնէդ, Կեա՛նք Յալիսենից: